ԿԱՔԱՎԱՍԱՐ

Վարչական ղեկավար՝ Ռազմիկ Ավագյան

Հեռ: 094 14 10 07

Մակերես՝ 14.6 կմ^2

Բնակչություն՝ 128

Ինդեքս՝ 2809

razmik.avagyan.96@mail.ru

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք գյուղից 15 կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 32 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Քեֆլի, Քեֆլու անվանումները: Կաքավասար է վերանվանվել 1978 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Գյուղը գտնվում է Չիչկան գետի վերին

հոսանքում, միջլեռնային գոգավորությունում՝ ծովի մակարդակից 1930 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տնական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Շրջակայքում կան սառնորակ աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-իերկրաշարժից: Գյուղի տարածքում գտնվում է Կարմրավոր անունով կիսավեր եկեղեցի: Շրջակայքում կան կիկլոպյան ամրոցի, հին գերեզմանների մնացորդներ: Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Բասենի, Էրզրումի շրջաններից 1915-18թթ: 1873 թ-ին գյուղն ունեցել է 206, 1897 թ-ին՝ 287, 1926 թ-ին՝ 281, 1939 թ-ին՝ 414, 1959 թ-ին՝ 217, 1970 թ-ին՝ 232, 1979 թ-ին՝ 176 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 123 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. Մինչաշխատունակներ՝ 30%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 18%: Ունի 28 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, մանկապարտեզ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (137հա), խոտհարքերը (80հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 45 և 660 հեկտար: Գյուղատնտեության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, բալ):